ՏԽՈՒՐ ԹԱԳԱՎԵՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի թագավեր ա ըլըմ, շատ հարուստ ա ըլըմ, ռեխա չի ունենըմ, շատ տխուր ա ըլըմ։
Օրերի մի օրը էս թագավերը գնըմ ա ժողովրդի մեջ ման գալ, մի փողոցով անց կենալիս, տենըմ ա՝ մի տանից ծիծաղի ձեն ա գալի, մոտանըմ ա, տենըմ ա ծափ, խնդում, ուրախութին։ Սա համարը գրըմ ա, վեր ունում։
Վեր գալիս ա տուն, վազիրին ասըմ ա.— Գնա էս ինչ համարի տան տուրունջը կանչի։
Վազիրը գալիս ա դրան կանչըմ ա, բերըմ թագավերի կուշտը։
Թագավերը սրան ասըմ ա.— Դուք էդ ընչի՞ վրա եք տհե ուրախանըմ, վեր ամեն ռուգուն ձեր տան մոտովը անցկենալիս ուրախութենի, ծափի, ծիծաղի ձեն եմ լսըմ։
Էս մարդը ասըմ ա.— Թագավերը ապրած կենա, ես չորս հատ լավ անգին քար ունեմ, ես ու իմ կնիկը նհանց հետ հաղ ենք անըմ, ուրախանըմ ենք։
Թագավերը զարմանըմ ա, ասըմ ա.— Ես հարուր եռեսուն անգին քար ունեմ, ամեն մինը մի ղշի ձվի չափ, ուրախանըմ չեմ, հմի դու էդ չորս հատի մհար ուրախ ե՞ս։
Էքսը թագավերը կնգա հետ նստըմ ա ու սկսըմ խաղ անիլը։ Կնիկը քցըմ ա, կպնըմ ա սրա աչք ունքն ա կապտցնըմ, սա քցըմ ա՝ կնգա աչք ունքն ա կպտցնըմ։ Տենըմ ա բան չի դուրս էկավ, թողըմ ա։
Էքսը էդ մարդին կանչըմ ու ասըմ ա.— Դու խի՞ ինձ խափեցիր։
Ասըմ ա.— Խի՞ խափեցի։
Ասըմ ա.— Բա ինչ արիր, ասեցիր. «Ես ու իմ կնիկը չորս անգին քարի հետ հաղ ենք անըմ, ուրախանըմ»։ Ես էլ իմ կնգա հետ հաղ արի, նա իմ աչք ունքը կպտացրավ, ես էլ իրանը։
Էս մարդը ծիծաղըմ ա, ասըմ ա.— Վա՛յ, թագավերը ապրած կենա, բա ինձ անգին քարը ո՞վ ա տվել, էդ հու ես իմ չորս ռեխին եմ անգին քար ասըմ։
Նոր թագավերը կլխի ա ըլըմ ու ասըմ ա.— Ախպեր, դուզ ես ասըմ, դուզ, վեր նրանք անգին քար են, դու նրանցով միշտ ուրախանըմ ես, համա ես իմոնցովը չեմ ուրախանըմ։